## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-23/17

ք. Դիլիջան «22» 08 2023 թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍՄ ստուդիո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ.Ավացյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Դիլիջան համայնքի Թեղուտ և Խաչարձան բնակավայրերի վարչական շենքերի և համայնքային կենտրոնների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2070000** (երկու միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը՝ և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:[2]

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051123
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Դ. Սարգսյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

««ՍՄ Ստուդիո» ՍՊԸ
Ք. Աբովյան, Ռոսիայի 4 շ. բն. 74
ՀՎՀՀ 03556688
Հ/Հ 2471003958690000
«Արդշինբանկ» ՓԲԸ Աբովյանի մ/ճ
ՀՎՀՀ 03556688
Տնօրեն Մ. Ավագյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 1*
*« 22 » 08 20 թ. կնքված*
*ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-23/17 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 71241200 | *Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական շենքի և համայնքային կենտրոնի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման խորհրդատվական ծառայություններ* | դրամ | 1340000 | 1 | Ք. Դիլիջան | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.11.2023թ. |
| 2 | 71241200 | *Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրի վարչական շենքի և համայնքային կենտրոնի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման խորհրդատվական ծառայություններ* | դրամ | 730000 | 1 | Ք. Դիլիջան | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.11.2023թ. |

| | |
|---|---|
| Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը | *Դիլիջան համայնքի Թեղուտ և Խաչարձան բնակավայրերի վարչական շենքերի և համայնքային կենտրոնների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման խորհրդատվական ծառայություններ*<br>*Նախատեսվող աշխատանքներ*<br>• Հիմնանորոգման աշխատանքներ<br>• Ցանկապատի վերանորոգման աշխատանքներ<br>• Բակի վերանորոգման աշխատանքներ<br>• Շենքի հատակի հիմնանորոգում<br>• Առաստաղի հիմնանորոգում<br>• Դռների և պատուհանների փոխարինում նորով<br>• Թեքահարթակների կառուցում<br>• Հակահրդեհային համակարգի տեղադրում<br>• Օդափոխության համակարգի տեղադրում<br>• Գույքի ձեռքբերում |
| Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը | **Նախատեսվում է**<br>- ուսումնասիրել տարածքը և ձեռք բերել օրենսդրությամբ սահմանված կարգով մշակված ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն (-ներ),<br>- ներկայացնել վերլուծական նյութեր ծախսերի խոշորացված հաշվարկների՝ այլընտրանքային լուծումների (կառուցապատման նախագծի և նոր շենքերի կառուցման վերաբերյալ) համադրման և նախատեսվող աշխատանքների հիմնավորման համար,<br>- շենքի համալրում հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն ապահովող սարքավորումներով՝ թեքահարթակներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, ինչպես նաև այլ միջոցառումներ նախատեսված օրենսդրությամբ<br>- նախագծով նախատեսել ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության և օդորակման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման, էներգախնայողության/ համակարգերի կառուցում, բազմաբնակարան շենքի արդիական ներքին հարդարում,<br>- նախագծով նախատեսել տարածքի բարեկարգում և կանաչապատում<br>- տարածքի բնակլիմայական պայմանների հաշվառմամբ, ըստ անհրաժեշտության, նախատեսել այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործման համակարգեր՝ արևային ջրատաքացուցիչներ, ֆոտովոլտային սալիկներ, շենքերում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար<br>- նախագծման ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցնել պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ<br><br>**Նախատեսվում է մշակել նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ հետևյալ կազմով.**<br>• Նախագծային լուծումներով անհրաժեշտ է ապահովել շուրջ ..... քմ ընդհանուր մակերեսով շենքի հիմնանորոգման և բնակավայրի կառուցապատման աշխատանքներ՝ նորմատիվային պահանջների համաձայն՝ համայնքի կարիքի գնահատմամբ<br>• *<u>շենքերի ընդհանուր նկարագիր</u>՝ նկուղային հարկի առկայություն (որպես քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույց օգտագործելու համար), շենքերի հարկայնությունը մինչև .....վերգետնյա հարկ, սենքերի/մակերեսների կազմն ըստ նախնական տվյալների (ենթակա է հստակեցման համայնքի ղեկավարի կամ պատվիրատուի հետ)*<br>• կաթսայատան և պոմպակայանի կառուցման նախագծեր՝ ըստ անհրաժեշտության<br>• <u>Տարածքի բարեկարգման նախագիծ</u><br>• <u>Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիություն ապահովող միջոցառումներ՝ թեքահարթակների, հատուկ բազրիքների, դռների բացվածքների, լուսավորության սարքերի նախատեսման նորմատիվ պահանջներ</u><br>• Այլ ենթակառուցվածքներ ՝ ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների |

| | |
|---|---|
| | նախագիծը մշակել կառուցապատման չափորոշիչներին համապատասխան՝ համայնքի զարգացման ծրագրի, գլխավոր հատակագծի, ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N408 և ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով հաստատված պահանջների շրջանակներում: |
| Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ | ***Հիմնավորում՝***<br>ՀՀ 2023 թվականի պետական բյուջե, ՀՀ վարչապետի հանձնարարականներ, ՀՀ կառավարության որոշումներ, ճարտարապետահատակագծային առաջադրանք, ինժեներական ենթակառուցվածքների տեխնիկական պայմաններ<br><br>***Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ***<br>- ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ,<br>- շենքերի և շինությունների համար ձեռք բերված տեխնիկական վիճակի մասին եզրակացություններ<br>- նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ),<br>- ոլորտային (շահագրգիռ) մարմինների եզրակացություններ՝ եթե այդպիսիք անհրաժեշտ են (շրջակա միջավայր, մշակույթ, արտակարգ իրավիճակներ):<br>Ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներում պարտադիր ներառման ենթակա են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ նախատեսված հիմնական պահանջները՝ սեյսմակայունության (երկրաշարժադիմացկունության) ապահովման, շենքերի նկուղային հատվածներում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական սենքերի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ միջոցառումների նախատեսման, տարածքների բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանմանն ու կլիմայի փոփոխություններին հարմարվողականությանն ուղղված՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության, ծառերի տնկարկով ուղեկցվող կանաչապատման նորմատիվ պահանջները:<br>Քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների (շենքերի նկուղային հատվածներում պարզ թաքստոցի) նախատեսումն իրականացնել գործող նորմատիվ իրավական ակտերին՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 06.04.2022թ N06-Ն հրամանով հաստատված <ՀՀ քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ> շինարարական նորմերին համապատասխան:<br><br>***Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝***<br><br>- <Քաղաքաշինության մասին> օրենք<br>- <Քաղաքացիական պաշտպանության մասին> օրենք<br>- <Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին> օրենք<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի <ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> **N 263-Ն հրաման**,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի <ՀՀՇՆ 20-04-2020 <Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր> շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին> **N 102-Ն հրաման**,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի ՀՀՇՆ 31-03-<Հասարակական շենքեր և շինություններ> Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին> **N 95-Ն հրաման,**<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.01.2021թ N02-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.06.2022թ N14-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.03-2022 «Վարչական և կենցաղային շենքեր» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 <Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին> **N 253-Ն հրաման**,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի «ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» **N 78-Ն հրաման**<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.12.2022թ **N31-Ն հրամանով** հաստատված <ՀՀՇՆ 24-02-2022 «Շենքերի էներգաարդյունավետության ապահովում. Էներգաարդյունավետության գնահատման ցուցանիշներ> շինարարական նորմեր,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 19.09.2022թ N22-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-03-2022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ» շինարարական նորմերին,<br>- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ. N95-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 31-03—2020 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 04.04.2022թ N06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.02-2022 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 20.05.2022թ N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 08.07.2022թ N 16-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N 103-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության կամիտեի նախագահի 13.04.2017թ N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022թ N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13.01-2022 «Գեոդեզիական աշխատանքները շինարարությունում» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 17.08.2022թ N 18-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20-05-2022 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կոռոզիայից,<br>- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 21.06.2022թ N12-Ն «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերին,<br>- ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թ N253-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերին,<br>- ՀՀ կառավարության 16.02.2006թ «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշմանը:<br>- ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» **N 1504-Ն որոշում**,<br>- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» **N 526-Ն որոշման Կարգի** 33-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներ<br>- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> **N596-Ն որոշում** |

| | |
|---|---|
| | - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի <Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության և վկայագրավորման (անձնագրավորման) մեթոդական ցուցումները հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 1998 թվականի նոյեմբերի 25-ի N168 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին> **N282-Ն հրաման** |
| Նախագծման փուլերը | **Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն**<br>Նախագծային աշխատանքների իրականացում **«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** փուլերով (այդ թվում՝ **Էսքիզային նախագիծ**՝ ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով) |
| Նախագծի կազմը | **«Նախագիծ»** և **«Աշխատանքային փաստաթղթեր»** <u>**փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր**</u><br>1. **Ընդհանուր բացատրագիր**<br>2. **Ճարտարապետաշինարարական մաս**<br>- Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ /այդ թվում սենքերի կահավորման հատակագիծ/<br>- Եռաչափ մոդելավորում (3D)<br>3. **Կոնստրուկտիվ մաս**<br>- Կոնստրուկտիվ լուծումներ,<br>- կոնստրուկտորական հաշվարկների հաշվետվություն<br>4. **Ինժեներական** (ներքին և արտաքին) լուծումներ (գծագրական և տեքստային նյութեր՝ այդ թվում մասնագրեր)<br>- Էլեկտրամատակարարման, կոյուղու, ջրամատակարարման, օդափոխության և օդորակման, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր,կապի ցանցեր, տեսահսկում, հակահրդեհային ազդանշանում, հրդեհաշիջում և այլն,<br>- Ինժեներական մասերի հզորությունների հաշվարկների հաշվետվություն<br>5. Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ<br>6. Շինարարության կազմակերպման նախագիծ<br>7. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ<br>8. Էներգախնայողությանն և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ:<br>9. Այլ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ (ինժեներատեխնիկական անվտանգություն, վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցառումներ)<br>***Համաձայնեցումներ***<br><u>*Նախագծի համաձայնեցում*</u><br>1. ***Համայնքի ղեկավարի,***<br>2. ***ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (կամ ՀՀ ՆԳՆ),***<br>3. ***ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,***<br>4. ***ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,***<br>Նախագծային փաստաթղթերի համաձայնեցման ապահովում բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմնի հետ: |
| Այլ պահանջներ | <u>***Եզրակացություններ***</u><br>Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում<br>1. **Նախագծողի կողմից** ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացությունների ձեռքբերում, ընդ որում ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն՝ համաձայն գործող կարգերի և զրունտների լաբորատոր փորձարկման միջոցով<br>2. **Նախագծողի կողմից** գոյություն ունեցող շենք-շինությունների (այդ թվում արտաքին հաղորդակցուղիների) տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացությունների ձեռքբերում, և նախագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում<br>**Փորձաքննություններ**<br>Որպես բարձր ռիսկայնության **(IV կատեգորիայի)** դասակարգում ունեցող օբյեկտ՝<br>1. քաղաքաշինական պարզ և պետական համալիր փորձաքննությունների ապահովում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով<br>**Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ**<br>- նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ,<br>- նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ,<br>- Էներգաարդյունավետություն ապահովող միջոցառումների, սարքավորումների և նյութերի ցանկ<br>Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները:<br>**Շինարարական հրապարակի կազմակերպման նկատմամբ** շինարարական արտադրության կազմակերպման նախագծում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների ամրագրում.<br>**Մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը.**<br>1. օբյեկտի նախապատրաստումը պետք է նախատեսի ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից նախագծային փաստաթղթերի (ներառյալ գոյություն ունեցող օբյեկտի վերակառուցման դեպքում կոնստրուկցիաների տեխնիկական հետազննության արդյունքների փաստաթղթերի) ուսումնասիրություն, շինարարության պայմաններին մանրազննին ծանոթություն, արտահրապարակային ու ներհրապարակային նախապատրաստական աշխատանքներ, շենքերի, շինությունների և նրանց մասերի կառուցման, ինչպես նաև անմիջական նախապատրաստական փուլի աշխատանքների իրականացման նախագծերի մշակում՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի անվտանգության պահանջները:<br>2. շինարարական հրապարակն անհրաժեշտ է ցանկապատել (պահպանական, պաշտպանական կամ ազդանշանային սարքերի, սարքավորումների, գովազդային վահանակների կիրառմամբ), ստեղծել երկրաբաշխական նշահարման հիմք, կառուցել մոտեցման ճանապարհներ, ձևավորել պահեստային տնտեսություն, նախատեսել շինարարության կարիքների համար անհրաժեշտ ծավալի կենցաղային նշանակության ու կոմունալ տնտեսության՝ ինժեներական ենթակառուցվածքների ժամանակավոր շինություններ (ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, ըստ անհրաժեշտության նաև գազամատակարարման ժամանակավոր հաղորդակցուղիներ),<br>3. հասարակության իրազեկելու նպատակով շինարարության համար հատկացված շինհրապարակի ցանկապատի /այդ թվում՝ ճանապարհաշինական աշխատանքների ուղեգծի/ կամ մեկ այլ առավել տեսանելի տեղամասում տեղադրել պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալները /անվանում, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար/, ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների, իսկ ՀՀ պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների կամ դրանց ներգրավմամբ և համայնքային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական |

<table>
<tr>
<td></td>
